

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ .

Հիանալի գիտարաններ
 Կան յանապատ խիստ հեռաւոր ,
 Զոր կանգնեցին հին հըսկաներ
 Յառաջ քան զամս հազարաւոր .
 Դէտք ինոսա բընաւ չըկան ,
 Կամ թէ եւ կան՝ բայց անկենդան .
 Անթիւ գիտունք շատ քրննեցին ,
 Ի՛նչ եղածնին դեռ չիմացան :

ՓԵՏՐՈՒԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ .

Կարօլոս Հինգերորդ Գերմանիոյ կայսրը որ էր միանգամայն թագաւոր Սպանիոյ եւ երկուց Սիկիլեայց . ծնաւ 1300-ին ու մեռաւ 1358-ին : Շատ պատերազմներ ըրաւ Գաղղիացւոց դէմ եւ գրեթէ միշտ յաղթող դանուեցաւ . քանի մը անգամ ալ Ափրիկէի վրայ արշաւեց եւ յաղթութիւններ ըրաւ , միայն ձէզայիրը չկրցաւ առնուլ : Ծերութեամբ եւ հիւանդութեամբ տկարացած՝ հրաժարեցաւ աթոռէն ու քաջուեցաւ Սպանիոյ վանքերէն մէկը եւ կրօնաւոր եղաւ : Մեռնելէն առաջ ուղեց իւր թաղման հանդէսը կատարել տալ վանքին եկեղեցւոյն մէջ , յուղարկաւորութեան թափօր մը կազմել տուաւ , իւր մարդկանց ձեռքը սեւ կերոններ տուաւ եւ ինքը նոցա ետեւէն կերթար պատանքի պէս

ճերմակ կտաւով մը փաթթուած : Յետոյ մեծ հանդէսով դադաղի մը մէջ պառկեցուցին զինքը եւ վրան հանգստեան պաշտօն կատարեցին . ինքն ալ անոնց հետ իմիսին կըսէր քահանայից ըրած աղօթքները , Հանդէսէն վերջը եկեղեցւոյն դռները փակուեցան , Կարօլոս ելաւ դադաղէն ու իւր սենեակը դնաց . բայց մէկ ամիս ետքը իսկապէս մեռաւ 58 տարեկան :

Թաղուելէն ետքը քիչ մնաց որ Սպանիոյ մոլեռանդ կրօնաքննիչները հանէին նորա մարմինն ու այրէին , որովհետեւ ըսող եղած էր թէ Կարօլոս իւր կենդանութեան ժամանակը երբեմն հաւատոյ վրայ թեթեւ կերպով խօսեր է : Բայց այս խորհուրդը չկատարուեցաւ :

Տարւոյս Օրացուցին մէջ դրուած Ապրիլի Հանելուկն է Ա Կ Ա Ն Զ :

ՀՐԱՄԱՆԱԻ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ . ԻԹԵՂՈՍԻԱ , Ի26 Մարտի 1864.

ԻՏպարանի Խալիպեան Ուսումնարանի ազգիս Հայոց .